



**ՀՀ տարածքային
կառավարման
նախարարություն**

**Ministry of
Territorial
Administration
of the Republic
of Armenia**

Երեւանում մեկնարկեց "Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում" թեմայով միջազգային համաժողովը

Երեւանում այսօր մեկնարկեց "Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում" թեմայով միջազգային համաժողովը, որը կազմակերպվել է Եվրոպայի խորհրդում Հայաստանի նախագահության շրջանակում:

Համաժողովի ընթացքում կքննարկվեն ԵՄ անդամ երկրներում տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության հետ կապված ներկա իրավիճակը, մասնակցային ժողովրդավարության դերը՝ տեղական իշխանությունների գործունեության արդյունավետության բարձրացման հարցում, տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության ամրապնդման ուղիները, կներկայացվի նաեւ ԵՄ անդամ երկրներում այս ոլորտում առկա դրական փորձը:

Համաժողովի աշխատանքներին մասնակցում են Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի նախագահ Յերվիգ վան Շտասան, Կոնգրեսի երկու՝ տեղական իշխանության եւ տարածաշրջանների պալատների նախագահներն ու անդամները, ինչպես նաեւ Հայաստանի շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, միջազգային եւ տեղական փորձագետներ:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը համաժողովի մասնակիցներին ներկայացրեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի ուղերձը, որում մասնավորապես նշվում է.

"Եվրոպայի խորհրդում Հայաստանի Հանրապետության նախագահության գերակայությունները սահմանելիս մենք հատուկ կարեւորել ենք տեղական ժողովրդավարությունը, քանի որ այն հասարակության ժողովրդավարական զարգացման համար առանցքային բաղադրիչ է:

Այս ուղղությամբ ուշադրություն ենք դարձնելու տեղական եւ տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում քաղաքացիների մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Եվրոպական փորձագետների մասնակցությամբ միջազգային նման ներկայացուցչական համաժողովը կարող է եական առաջընթացի համար նախադրյալներ ստեղծելու եւ աշխատանքների հետագա ուղղություններ նախանշելու լավ հարթակ հանդիսանալ:

Ուտրեխտ քաղաքում ընդունված Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի "Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին" լրացուցիչ արձանագրության դրույթներին համապատասխան, որև, ի դեպ Չայաստանում ուժի մեջ կմտնի 2013 թվականի սեպտեմբերի 1-ից, "Տեղական ինքնակառավարման մասին" Չայաստանի Չանրապետության օրենքում կատարվել են լրացումներ, որոնք միտված են օրենսդրորեն ամրապնդելու քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը եւ հրապարակայնությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը բնակչության մասնակցելու նոր ինստիտուտ է ներդրվել: Համայնքի 16 տարին լրացած բնակիչները հնարավորություն են ստացել համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ հանդես գալ:

Օրենքի մակարդակով կանոնակարգվել են համայնքի բնակիչների ընդունելությունների, հանրային հանդիպումների եւ քննարկումների կազմակերպման, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի իրականացման վերաբերյալ ավագանու անդամների պարտավորությունները:

Վստահ եմ, որ համաժողովի ընթացքում կհաջողվի նոր մոտեցումներ մշակել համայնքային գործերին բնակչության մասնակցության համար մատչելի, գործնական ու արդյունավետ մեխանիզմներ ներդնելու հարցում: Դրանք կարող են ներդրվել Եվրոպայի խորհրդի երկրների ազգային օրենսդրություններում՝ ապահովելով տեղական ժողովրդավարությանը բնակչության ավելի լայնաշերտ ու անընդհատ մասնակցության մակարդակ":

Իր ելույթում փոխվարչապետը Չայաստանում համաժողովի անցկացումը բացառիկ հնարավորություն համարեց՝ տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության վերջին զարգացումները քննարկելու համար: Նա նշեց, որ Չայաստանը կարելուում է տեղական ժողովրդավարության ամրապնդումը եւ հանդես է գալիս որպես այդ սկզբունքը կարելուող երկիր: "Տեղական ժողովրդավարության հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ քաղաքացիները պետք է իրավունք ունենան ազդելու իրենց համայնքի ներկայացուցչական մարմինների որոշումների վրա, որոնք վերաբերում են նրանց կյանքին, կենցաղին եւ համայնքին՝ ամբողջությամբ: Մասնակցային կառավարման մեջ, որպես առանձնահատուկ դեր ունեցող կողմ, հանդես է գալիս պետությունը՝ ի դեմս կենտրոնական իշխանության: Վերջինիս վարվող քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի օրենսդրության կատարելագործմանը, ինչի արդյունքում ՏԻՄ-երը իրավական հնարավորություն կստանան որոշումներ ընդունելիս մասնակից դարձնել տարբեր սուբյեկտների ու նրանց հետ քննարկել

խնդիրների իրականացման, ինչպես նաև հիմնախնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ",-նշեց Ա. Գելորգյանը:

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանն իր խոսքում նույնպես բարձր գնահատեց համաժողովի նշանակությունը եւ քննարկվող թեման համարեց արդիական: "Չնայած Եվրոպայի խորհրդի Կոնգրեսի նստաշրջանների, հանձնաժողովների նիստերի շրջանակներում այս հարցերի շուրջ կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, միեւնույն է, մասնակցային ժողովրդավարության թեման ոչ միայն չի կորցրել իր արդիականությունը, այլև ավելի ու ավելի առանցքային է դարձել: Ընդ որում՝ կառավարման բոլոր մակարդակներում: Մարդիկ պետք է վստահ լինեն, որ իրենց կարծիքը հաշվի է առնվում: Եվ իմ խորին համոզմամբ, որոշումների կայացման հարցում քաղաքացիների մասնակցությունը պետք է դառնա ժամանակակից ժողովրդավարության ու կառավարման անբաժանելի բաղադրիչը" .-նշեց նա:

Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի նախագահ Ջերվիգ վան Շտասան իր ելույթում նկատեց, որ համաժողովը Հայաստանում եւ Եւ-ում Հայաստանի նախագահության ընթացքում կազմակերպելը պատահական չէ, քանի որ Հայաստանն այն երկրներից է, որ արդեն վավերացրել է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ՝ տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավունք սահմանող Ուտրեխտի արձանագրությունը: "Մասնակցության խնդիրը որպես գերակայություն ներառված է Կոնգրեսի՝ 2013-2016թթ. գործողություններում, որով մենք հաստատում ենք, որ ժողովրդավարության որակը կախված է ժողովրդավարական գործընթացներում քաղաքացիների մասնակցությունից",-հայտարարեց նա:

Համաժողովի ընթացքում կկազմակերպվեն քննարկումներ հետեւյալ՝ "Արդյոք այսօր տեղական ժողովրդավարությունը հնարավոր է առանց ուղիղ մասնակցությանե, "Մասնակցային մոդել. ուղիղ եւ ներկայացուցչական ժողովրդավարության միավորում", "Էլեկտրոնային ժողովրդավարություն. քաղաքացիական մասնակցության նոր ձեւեր" թեմաներով:

Քննարկումների արդյունքները կամփոփվեն համաժողովի փակմանը՝ Ջերվիգ վան Շտասայի եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի կողմից:

Հասարակայնության հետ կապերի բաժին